

Հաստատում եմ՝ Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարանի ռեկտորի ժ/պ, մանկավարժական

գիտությունների դոկտոր

Ա.Մ.Ծատուրյան

12 նոյեմբեր, 2025թ.



ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ Աննա Արթուրի Շահբազյանի՝ «Անգլերեն հեղինակային նորակազմությունների համարժեքության պահպանման խնդիրը հայերեն թարգմանվածքում (Ջ.Ռուսլինգի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի հիման վրա)» ատենախոսության մասին՝ ներկայացված բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար՝ Ժ.02.07.

«Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ:

Կարծիքն ընդունվել է ՎՊՀ-ի օտար լեզուների և գրականության ամբիոնի նիստում (12.11.2025թ., արձ. թիվ 6) բաց քվեարկությամբ: Նիստին մասնակցում էին ամբիոնի անդամներից 27-ը՝ օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Թ. Թադևոսյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Ջաղինյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Վարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաբայանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Առուստամյանը, բ.գ.թ., դոցենտ Ժ. Ալոյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Դոխոյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Պապոյանը, բ.գ.թ., դոցենտ Է. Զոհրաբյանը, բ.գ.թ., ավագ դասախոս Ա. Դանիելյանը, ավագ դասախոս Ա. Սիմոնյանը, դասախոսներ՝ Գ. Մատինյանը, Լ. Փարսադանյանը, Ա. Փարեմուզյանը, Լ. Ավետյանը, Կ. Սարգսյանը, Է. Սարգսյանը, Մ. Էնֆենջյանը, Ա. Հարությունյանը, Ս. Բարսեղյանը, Հ. Սահակյանը, Է. Գևորգյանը, Լ. Ժամհարյանը, Ն. Սիրունյանը, Մ. Էվոյանը, Ս. Առաքելյանը, Ն. Մարիկյանը:

Ելույթ ունեցան օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչ Թ. Թադևոսյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Ջաղինյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Առուստամյանը,

Մ.Էնֆենջյանը, ք.գ.թ., դոցենտ Ս. Բաբայանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ ատենախոսությունը նվիրված է անգլերեն հեղինակային նորակազմությունների համարժեքության պահպանման հիմնախնդրի ուսումնասիրությանը: Աշխատությունը կարևոր է թե՛ տեսական, թե՛ գործնական առումով:

Ատենախոսության հիմքում ընկած է անգլերեն հեղինակային նորակազմությունների համարժեքության պահպանման խնդիրը հայերեն թարգմանվածքում՝ Զ.Ռոուլինգի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի հիման վրա: Ուսումնասիրության առարկան «Հարրի Փոթեր» վիպաշարի առաջին հատորի հեղինակային նորակազմությունների ամբողջացումն է՝ հայերեն թարգմանվածքում համարժեք պահպանման տեսանկյունից՝ հաշվի առնելով օգտագործված նորաստեղծ բառային կառույցների իմաստագործաբանական առանձնահատկությունները:

Աշխատանքի փաստական նյութը Զ.Ռոուլինգի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում գործածված հեղինակային նորակազմություններն են և դրանց հայերեն թարգմանությունները Ա.Ջիվանյանի և Լ.Մկրտչյանի թարգմանություններում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ անդրադարձ է կատարվել ատենախոսության թեմային վերաբերող նյութի տեսական հարցերին, ուսումնասիրվել մեծաթիվ գիտնականների աշխատություններ (Է.Աղայան, Մ.Կաբրե, Ա.Ռեյ, Վ.Զաքոտկինա, Զ.Գրին, Փ. Նյումարք, Ժ.Վինեյ և Ժ.Դարբելնե, Մ.Բեյքեր, Յու.Նայդա և այլք), որոնց հետագայում ատենախոսը ամենայն մանրամասնությամբ հիշատակել է օգտագործված գրականության ցանկում և իր ուսումնասիրական վերլուծությունը կառուցել նրանց տեսակետների հենքի վրա: Ատենախոսը սպառնիչ հիմնավորում է տալիս իր կատարած աշխատանքի առարկայի, նրա տեսական և գործնական արժեքի, թեմայի

արդիականության, գիտական նորույթի, նպատակի, խնդիրների, մեթոդների, գործնական նշանակության վերաբերյալ:

Ատենախոսության ուսումնասիրության առարկան «Հարրի Փոթեր» վիպաշարի առաջին հատորի հեղինակային նորակազմությունների ամբողջացումն է՝ հայերեն թարգմանվածքում համարժեք պահպանման դիտանկյունից՝ կենտրոնանալով նորաստեղծ բառային միավորների իմաստային և գործաբանական առանձնահատկությունների վրա:

Աշխատանքի առաջին գլուխը նվիրված է արդի անգլերենի նորաբանությունների լեզվագործաբանական առանձնահատկություններին, նորաբանության հասկացությանը, նորաբանությունների և հեղինակային նորակազմությունների իմաստային և գործաբանական բնույթին: Այստեղ մանրամասնորեն քննվում է նորարարություն հասկացությունը, տարբերակվում են նորահայտ երևույթների անվանման անհրաժեշտությամբ առաջացած նորաբանությունները և կոնկրետ հեղինակների կողմից ստեղծվող նորակազմությունները, ուսումնասիրվում են նոր բառերի և արտահայտությունների կազմության առանձնահատկությունները և դրանց վերաբերյալ առկա տեսությունները: Աշխատանքում առանձնակի կարևորություն է տրվում այն դիտարկմանը, որ հեղինակային նորակազմությունները ծառայում են նորահայտ երևույթների, առարկաների, իրադարձությունների անվանման նպատակին:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է նորաբանությունների և հեղինակային նորակազմությունների թարգմանական խնդիրներին, մարտահրավերներին, նաև դրանց հաղթահարման ուղիներին: Այստեղ քննարկվում է լեզուների միջև բացարձակ թարգմանելիության անհնարինության խնդրով պայմանավորված համարժեքության ապահովման կարևորությունը թարգմանաբանության մեջ: Ուսումնասիրության մեջ համարժեք թարգմանությունը դիտարկվում է որպես մարտահրավեր «ֆենթեզի» կոչվող ժանրի թարգմանության գործընթացում՝ հաշվի առնելով այդ ժանրատեսակի ստեղծագործություններում հեղինակների կողմից բառերի առկայությունը: Այստեղ համարժեք

թարգմանությունը դիտարկվում է որպես մեծ մարտահրավեր «Ֆենթըզի» կոչված ժանրի թարգմանության գործընթացում՝ հաշվի առնելով այդ ժանրի գործերում հեղինակի ստեղծած բառապաշարի առկայությունը: Քանի որ հեղինակային նորակազմությունների թարգմանության ռազմավարություններն ու մեթոդները առանձնանում են թարգմանաբանության մեջ առաջադրված ընդհանրական դասակարգումներից, այս մասնաբաժնում անդրադարձ է կատարվում թարգմանության մեթոդներին՝ ըստ հիմնարար տեսական ոլորտների և ներկայացվում են ինչպես Ժ.Վինեի և Ժ.Դարբելնեի, այլև Փ.Նյումարքի առաջադրած դասակարգումները որպես նպատակահարմար միջոցներ՝ ուսումնասիրվող ստեղծագործության հեղինակային նորակազմությունների միջլեզվական փոխադրման բնույթը որոշելու համար:

Աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է հեղինակային նորակազմությունների իմաստային և լեզվագործաբանական առանձնահատկությունների համարժեք պահպանման խնդրին՝ Զ.Ռոուլինգի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի հայերեն թարգմանվածքի հիման վրա: Այստեղ քննվում են վեպի հեղինակային նորակազմությունները որպես ժանրի յուրահատուկ տարրեր և կարևորում դրանց թարգմանության հարցերը: Վեպի թարգմանությունն անխուսափելիորեն ենթադրում է հեղինակի նպատակի մեկնություն, ստեղծված նորակազմությունների հարանշանակության պարզում և փոխանցում թիրախ լեզվի ընթերցողին: Այստեղ նշվում է, որ վեպի թե՛ մշակութային, և թե՛ ժանրային առանձնահատկությունների, մասնավորապես նորակազմությունների համարժեք փոխանցումը թիրախ լսարանին, նախաթարգմանական գործունեություն է պահանջում: Եվ այստեղ թարգմանչի գերխնդիրն է որոշել, թե ո՞ր դեպքում է անհրաժեշտ պահպանել, և ո՞ր դեպքում թարգմանել հեղինակային նորակազմությունը՝ դրա գործաբանական արժեքի կորստից խուսափելու և ընթերցողին հնարավորինս ճիշտ փոխանցելու այն ազդեցությունը, որով հեղինակը նպատակ է ունեցել թողնել ընթերցողի վրա բառաստեղծման այդ ձևով: Այս գլխում դիտարկվում է հեղինակային նորակազմությունների իմաստային և լեզվագործաբանական առանձնահատկությունները և դրանց համարժեք պահպանման

խնդիրը թարգմանվածքում: Այդ նպատակով դուրս է բերվել նորակազմությունների մի ստվար հատված՝ ընդգծելու խնդրո առարկայի իմաստագործաբանական առանձնահատկությունները և թարգմանական համարժեքության հարցերը: Մանրամասն վերլուծելով հիշյալ թարգմանիչների կատարած աշխատանքը, ատենախոսը նշում է, որ քննարկվող նորակազմությունների թարգմանության գործընթացում նրանք հիմնականում նախապատվությունը տվել են փոխանցման՝ հնչյունադարձման հնարի կիրառմանը, որի արդյունքում, թեև տեղի է ունեցել նորակազմությունների ձևային համարժեքության ապահովում, այնուամենայնիվ նկատվում է իմաստագործաբանական ներուժի փոխանցման ձախողում, ինչը, ըստ նրա ցանկալի չէ՝ հաշվի առնելով այն մտազուգորդումները, որ բնագրային տարբերակները կարող են առաջացնել բնագրի լեզվակիր ընթերցողների շրջանում:

Եզրակացությունների մեջ ամփոփված են ուսումնասիրության գործընթացից ստացված արդյունքները, իսկ գրականության ցանկը ներառում է այն բոլոր տեսական աղբյուրները, որոնք օգտագործվել են աշխատանքը ամբողջական դարձնելու համար:

Սույն աշխատությունը կարելի է հաստատագրել, որ ներկայացված է պատշաճ մակարդակով՝ թե կառուցվածքային, և թե տրամաբանական առումով: Իր բնույթով աշխատանքը ավարտուն է և ամբողջական, սակայն կցանկանայինք նշել որոշ կետեր և խնդիրներ, որոնց առկայության դեպքում այն միանշանակ կշահեր,

1. Հեղինակը ներածական մասում նշում է, որ աշխատանքը իրականացնելիս օգտվել է այնպիսի մեթոդներից, ինչպիսիք են համակարգային, համատեքստային և խոսուրթի, բառակազմական, լեզվաբանաստեղծական, լեզվաոճական և իմաստագործաբանական, քանակական և որակական, նկարագրական և զուգադրական վերլուծությունների մեթոդները: Մեր կողմից կառաջադրեինք մեկ այլ մեթոդի կիրառում, այն է՝ հաղորդակցական-քերականական վերլուծության մեթոդը: Կարծում ենք այս մեթոդի կիրառման հնարավոր նախադրյալները կային ուսումնասիրության մեջ:

2. Աշխատանքում անընդմեջ հիշատակվում է «Ֆենթըզի ժանր» եզրույթը, որի հետ մենք միանշանակ համամիտ չենք, հատկապես, որ խոսվում է թարգմանության

հարիր «երևակայության ժանր» տարբերակը, այն մեր խորին համոզմամբ, ժամանակն է, որ մուտք գործի համապատասխան համարժեքային տարածք:

3. Ավելի նպատակահարմար կլիներ, եթե ատենախոսը հեղինակային նորակազմությունների և նորաբանությունների հստակ տարբերակումը նշեր ոչ միայն դրանց դիպվածային գործածության տեսանկյունից, քանի որ նորակազմությունները, մեր կարծիքով, հաճախակի կիրառման դեպքում միտում ունեն դառնալու նորաբանություն (հատկապես լեզվի ակտիվ խոսակցական մակարդակում):

4. Ատենախոսը նշում է, որ քննարկվող նորակազմությունների թարգմանության գործընթացում հիշյալ թարգմանիչները նախապատվությունը հիմնականում տվել են փոխանցման՝ հնչյունադարձման հնարի կիրառմանը, որը համարում է ոչ ցանկալի, սակայն մեր խորին համոզմամբ, այն շատ դեպքերում նույնիսկ անհրաժեշտ է՝ ընդգծելու բնագրի բառի, կառույցի բնական միջավայրային կարգավիճակն ու հնչողությունը:

5. Աշխատանքում նկատելի են որոշ թերություններ (նախադասությունների ձևակերպում, էջերի և օգտագործված գրականության ցուցակի հղումների անհամապատասխանություն, տառերի բացթողում):

Վերը նշվածը չի նվազեցնում ատենախոսության արժեքն ու նշանակությունը և այն բավարարում է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանին ներկայացվող ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջները, իսկ ատենախոսը արժանի է Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչ Թ. Թադևոսյանը, ելնելով ամբիոնի ներկայացրած կարծիքից, առաջարկեց Ա. Շահբազյանի ատենախոսությունը պաշտպանության երաշխավորելու հարցը դնել քվեարկության:


Քվեարկություն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշվեց, որ ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կարգի պահանջներին, և Աննա Արթուրի Շահբազյանն արժանի է

իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի՝ Ժ.02.

07. «Գերմանական լեզուներ մասնագիտությանը»

ՎՊՀ-ի օտար լեզուների և գրականության
ամբիոնի վարիչ՝



Բ.Գ.Թ. Ղոցենտ Թադևոս Թադևոսյան

Թադևոս Թադևոսյանի ստորագրությունը

վավերացնում եմ՝

ՎՊՀ-ի գիտաբարոյագիտության



Մ.Գ.Թ. Ղոցենտ Սեդա Բեժանյան

12.11.2025թ.